



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

« 16 » հուլիսի 2018 թ.

№ 433 -Լ

Հ Ր Ա Մ Ա Ն

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 1-ին, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի 40-րդ հոդվածի 3.1-րդ մասերով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի թիվ 702-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 17-րդ կետի 14-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հարկային մարմնի օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության կիրառման և հարկային պարտավորությունների առաջադրման համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով վարչական ակտ ընդունելու իրավասությունը վերապահել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետին:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:



ԴԱՎԻԹ ԱՆԱՆՅԱՆ